«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 11;
20.06.2024 թ.

1. ռեկտորատի նախորդ նիստի որոշումների կատարողականի վերաբերյալ.

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել Ս. Դավեյանին, Մ. Վարդանյանին, Ա. Աղասարյանին կազմակերպել Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի նախկին ուսանողուհի Նելլի Անդրյանի ուսանողական իրավունքների վերականգնման հարցի լրացուցիչ քննարկում:

2. 2023-2024թթ ուստարվա երկրորդ կիսամյակի քննությունների ընթացքի և խնդիրների վերաբերյալ.

2.1. 2023-2024 ուստարվա ընթացքում առարկայական և կրեդիտային պարտքեր ունեցող ուսանողներին հնարավորություն տալ հանձնելու պարտքերը՝ կրեդիտային պարտքերի լրացման ընթացակարգով, մինչև երկրորդ կիսամյակի ավարտը: Քննությունները կազմակերպել ամբիոններում:

2.2. Ագրոնոմիական ֆակուլտետի ուսանողներ Հրանտ Սերժիկի Օհանյանին ու Մավրիկ Սերժիկի Օհանյանին թույլատրել անվճար հիմունքներով մասնակցելու կրեդիտային պարտքերի դասընթացներին, հանձնելու քննությունները մինչև 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի ավարտը:

3. ՀԱԱՀ-ում գործող կանոնակարգերում փոփոխություններ կատարելու հարցի վերաբերյալ.

3.1. Ընդունել ի գիտություն:

3.2. Հանձնարարել գիտական քարտուղար Գ. Ավագյանին ՀԱԱՀ կանոնակարգերում առաջարկվող փոփոխությունները, ինքնուրույն և լաբորատոր աշխատանքների գնահատման ռուբրիկների օրինակելի ձևաչափերը ներկայացնել ռեկտորատի բոլոր անդամներին՝ ստորաբաժանումներում քննարկելու և մինչև ս.թ. հունիսի 30-ը առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

3.3. Ինքնուրույն աշխատանքի կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների հարցին անդրադառնալ ՈԳԱ կենտրոնի կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքների մոնիթորինգի արդյունքների ամփոփումից հետո:

4. 2024-2025թթ ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության ելակետային տվյալների վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ